ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՍՊԻՏԱԿԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ

Հայաստանի Հանրապետություն, Լոռու մարզ, Սպիտակի համայնքապետարան, Շահումյան 7, 1804,
Հեռ: (0-255) 2-25-00, Ֆաքս: (0-255) 2-25-97, էլ. փոստ: municipalityspitak@gmail.com

« 26 » մայիսի 2021թ. № 034/27- 807

Ա/Ձ Հովիկ Ավագյանին
(գ. Լեռնավան, 14փ. 5 տ
էլ. փոստ. hovo71010@mail.ru)

Ծանուցում

Պայամագիրը միակողմանի լուծելու մասին

Սպիտակ համայնքի և Ա/Ձ Հովիկ Ավագյանի (այսուհետ՝ Ընկերություն) միջև 27.10.2020թ. կնքված թիվ ՀՀ ԼՄՍՀ-ԳՀԱՇՁԲ-20/36 պայմանագրի 1.1 կետի համաձայն՝ «Կապալառուն պարտավորվում է սույն պայմանագրով (այսուհետ՝ Պայմանագիր) սահմանված կարգով, նախատեսված ծավալներով, ձևով և ժամկետներում կատարել սույն պայմանագրի N 1 Հավելվածով սահմանված ծավալաթերթ-նախահաշվով նախատեսված Սպիտակ համայնքի գեղարվեստի դպրոցի զուգարանի կառուցման աշխատանքները (այսուհետ՝ աշխատանք), իսկ Պատվիրատուն պարտավորվում է ընդունել կատարված աշխատանքը և վարձատրել դրա համար:

Պայմանագիրը կնքվել է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի հիման վրա, ֆինանսական միջոցներ նախատեսելուց հետո պայմանագրի կողմերի միջև 31.03.2021 թվականին կնքվել է լրացուցիչ համաձայնագիր, որով աշխատանքների կատարման վերջնաժամկետ է սահմանվել 2021 թվականի մայիսի 31-ը:

Սպիտակ համայնքը հեռախոսազանգերի միջոցով բազմիցս դիմել է Ընկերությանը՝ աշխատանքները սկսելու համար, սակայն վերջինիս կողմից մինչ օրս ոչ մի միջոց չի ձեռնարկվել աշխատանքները կատարելու ուղղությամբ:

Պայմանագրի 3.1.4 կետի համաձայն՝ Պատվիրատուն իրավունք ունի՝ «Միակողմանի լուծել պայմանագիրը և պահանջել հատուցելու իրեն պատճառված վնասները, եթե.

ա) Կապալառուն ժամանակին չի սկսում աշխատանքի կատարումը կամ աշխատանքը կատարում է այնքան դանդաղ, որ դրա ժամանակին ավարտը դառնում է ակնհայտ անհնար,

բ) Կապալառուն խախտել է պայմանագրի 1.3 կետում նախատեսված ժամկետը (ներառյալ օրացուցային գրաֆիկը)»:

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ Ընկերությունը խախտել է պայմանագրով ստանձնած պարտավորությունները, Սպիտակ համայնքը միակողմանի լուծում է Ա/Ձ Հովիկ Ավագյանի հետ 27.10.2020 թվականին կնքված ՀՀ ԼՄՍՀ-ԳՀԱՇՁԲ-20/36 պայմանագիրը՝ պատշաճ ծանուցումն ապահովելու նպատակով կիրառելով ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման մասին» կարգի 33-րդ կետի 17-րդ ենթակետով սահմանված դրույթները:

Ընկերության կողմից, որպես պայմանագրային պարտավորությունների պատշաճ կատարման ապահովում ներկայացրած որակավորման և պայմանագրի ապահովումները (տուժանքի մասին համաձայնագրերը՝ հավելված 4.2 և հավելված 5.1) կից վճարման պահանջագրերի հետ միասին, սահմանված կարգով կներկայացվեն «ԱԿԲԱ ԲԱՆԿ» ԲԲԸ՝ տուժանքի մասին համաձայանագրերով սահմանված գումարները (1 900 000 ՀՀ դրամ և 190 000 ՀՀ դրամ) Սպիտակի համայնքապետարանի 900245161063 հաշվեհամարին փոխանցելու նպատակով:

Ընկերությանը, «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն, գնումների ընթացակարգերին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով, Ընկերության տվյալները օրենքով սահմանված կարգով կներկայացվեն լիազոր մարմին:

Հարգանքներով՝

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Գ. ՍԱՀԱԿՅԱՆ

Digitally signed by SAHAKYAN GAGIK 3707650340
Date: 2021.05.26 09:27:08 AMT

Կատ.՝ Արսեն Ավետիսյան